ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ բանաստեղծ-մանկագիր, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Արցախի Հանրապետության մշակույթի և արվեստի վաստակավոր գործիչ Յուրի Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Լենինգրադյան փողոցի հ.52 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յուրի Սահակյանը ծնվել է 1937 թվականի հուլիսի 22-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չայլու գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1966 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1971-1973 թվականներին մասնակցել է Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտին կից գրականության բարձրագույն դասընթացներին: Աշխատել է Երևանի հեռուստատեսության ստուդիայում, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրությունում, Հայաստանի գրքասերների ընկերությունում, «Սովետական գրող» և Արևիկ հրատարակչություններում: 1999 թվականին «Այբբենարանի ուղեկից» մանկական բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է Հայաստանի Հանրապետության «Ոսկե եղեգն» պետական գրական առաջին կարգի մրցանակի: 2012 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 21-րդ տարեդարձի կապակցությամբ, ինչպես նաև բազմամյա վաստակի և ստեղծագործական նվաճումների համար շնորհվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի, իսկ 2018 թվականին՝ Արցախի Հանրապետության մշակույթի և արվեստի վաստակավոր գործչի կոչում:

Հայաստանի գրողների միության անդամ էր 1968 թվականից:

Յուրի Սահակյանի բանաստեղծությունները թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, շվեդերեն, իսպաներեն, սերբերեն, լիտվերեն, բուլղարերեն, աբխազերեն, ուկրաիներեն, ադրբեջաներեն: Նրա բանաստեղծությունների հիման վրա գրվել են բազմաթիվ երգեր.

«Արփա Սևան» - երաժշտություն՝ Էդգար Հովհաննիսյանի,

«Այլ աչեր» - երաժշտություն՝ Էդուարդ Թումանյանի,

«Շարունակիր ժպտալ» - երաժշտություն՝ Ռոբերտ Ամիրխանյանի, և այլն:

«Կյանքն անցողիկ է» - երաշժտությունը՝ Ստեփան Բաբաթորոսյանի

«Նամակ ռազմաճակատից» - երաժշտությունը՝ Ստեփան Բաբաթորոսյանի

Յուրի Սահակյանը մահացել է 2019 թ. նոյեմբերի 24-ին:

Յուրի Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Լենինգրադյան փողոցի հ.52 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա որդու՝ Հակոբ Սահակյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Յու.Սահակյանի ընտանիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների

իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ